



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

8 սեպտեմբերի 2017 թվականի թիվ 43-Ա
ք. Երևան

ԹՎԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ՑԱՆՑԻ ՄԻՋՈՑՈՎ ՌԱԴԻՈՇՐԱԳՐԵՐԻ
ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ
ՑԱՆԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՅՏԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ
ՕՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 28-ի «Թվային հեռարձակման ցանցի միջոցով ռադիոձրագրերի հեռարձակման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 28-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ և 14-րդ կետերի դրույթներով՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը *որոշեց*.

1. Հրապարակել թվային հեռարձակման ցանցի միջոցով ռադիոձրագրերի հեռարձակման լիցենզավորման թիվ 1-18 մրցույթների մասնակիցների ցանկը՝ համաձայն Հավելվածի:
2. Սահմանել թվային հեռարձակման ցանցի միջոցով ռադիոձրագրերի հեռարձակման լիցենզավորման թիվ 1-18 մրցույթների մասնակիցների հայտերի և կից փաստաթղթերի հրապարակման օր՝ 2017 թվականի սեպտեմբերի 15-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Գ. ԲՈՒՆԻԱԹՅԱՆ

**ԹՎԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ՑԱՆՑԻ ՄԻՋՈՑՈՎ ՌԱԴԻՈՏՐԱԳՐԵՐԻ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ
 ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԹԻՎ 1-18 ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿ**

<i>Մրցույթի հերթական համարը</i>	<i>Սփռման տարածքը</i>	<i>Ռադիոժրագրի թեմատիկ ուղղվածությունը</i>	<i>Մասնակցի անվանումը</i>
թիվ 1	Հայաստանի Հանրապետություն	ընդհանուր	«ՌԱԴԻՈ ՊՌՈ» ՍՊԸ
թիվ 2	Հայաստանի Հանրապետություն	ընդհանուր	«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ
թիվ 3	Հայաստանի Հանրապետություն	ընդհանուր	«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ
թիվ 4	ք. Երևան	ժամանցային	«ԱՎՏՈՌԱԴԻՈ» ՍՊԸ
թիվ 5	ք. Երևան	երիտասարդական	«ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊԸ
թիվ 6	ք. Երևան	երաժշտական	«ՇԱՆՍ ՄԵԴԻԱ» ՍՊԸ
թիվ 7	ք. Երևան	ընդհանուր	«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊԸ
թիվ 8	ք. Երևան	ընդհանուր	«ԷՅԴԻԹԻ» ՍՊԸ
թիվ 9	ք. Երևան	ընդհանուր	«ԻՄՊՈՒԼՍ» ՍՊԸ
թիվ 10	ք. Երևան	ընդհանուր	«ՖՄ-105.5» ՍՊԸ
թիվ 11	ք. Երևան	ընդհանուր	«ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ
թիվ 12	ք. Երևան	ընդհանուր	«ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊԸ
թիվ 13	ք. Երևան	ընդհանուր	«ՔԻՍՍ ԷՖ ԷՄ» ՍՊԸ
թիվ 14	ք. Երևան	ընդհանուր	«ՌԱԴԻՈՏՈՒՆ» ՍՊԸ
թիվ 15	ք. Երևան	ընդհանուր	«ԱՐՁԱԳԱՆՔ ՍՏ.» ՍՊԸ
թիվ 16	ք. Երևան	ընդհանուր	«ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊԸ
թիվ 17	ՀՀ Շիրակի մարզ	ընդհանուր	«ՇԱՆԹ» ՍՊԸ
թիվ 18	ՀՀ Լոռու մարզ	ընդհանուր	«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ